Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հուլիսի 8-ի N 434 - Ա որոշման

«Դիլիջանի արվեստի պետական քոլեջի շենքի վերանորոգման աշխատանքներ»

Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է հիմնանորոգել Դիլիջանի արվեստի պետական քոլեջի շենքը, որը հարմարավետ պայմաններ կստեղծի քոլեջի 240 աշակերտի ուսումը կազմակերպելու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	Բարեգործը	Հայ օգնության Ֆոնդ, Նյու Յորք, ԱՄՆ
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, քաղ. Երևան 0010, Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ, Տավուշի մարզ, քաղ. Դիլիջան, Կալինինի փող., 57 շենք Բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 330,118.40 (երեք հարյուր երեսուն հազար հարյուր տասնութ ԱՄՆ-ի դոլար քառասուն ցենտին) համարժեք դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Դիլիջանի արվեստի պետական քոլեջի 240 աշակերտ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբը՝ հուլիսի 4, 2019 թ. Ավարտը՝ մայիսի 31, 2020 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հիմնանորոգել Դիլիջանի արվեստի պետական քոլեջի շենքը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 330,118.40 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: Իրականացվելիք շինարարական վերանորոգման աշխատանքների մանրամասն ծավալները ներկայացված են պայմանագրին կից հավելվածում: Աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև 2020 թ. մայիսի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 330,118.40 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, պայմանագիր՝ կնքված 04.06.2019 թ. Հայ օգնության ֆոնդի (ՀՀ, քաղ. Երևան 0010, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) և «Կանակա» ԲԲԸ (ՀՀ, քաղ. Վանաձոր 2022, Նժդեհի փողոց 4, ՀՎՀՀ 06901369) միջև:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագիրը չի նախատեսում կազմակերպական ծախսեր:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցելու է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Տավուշի մարզպետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարե-գործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ